

ՀՆՁՍԱԿ

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՕՐԳԱՆ ՀՆՁԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ

Մ Բ Ե Ի Ե Լ Ե Ա Ն Խ Ն Դ Ի Ր

Ե Ի

ՀԱՅՈՑ ՆԵՐԿԱՆ

(Յողուած Ծրկորոռ.)

Օսմանեան կառավարութիւններն ամեն ժամանակ և մասնաւորապէս Արշիւ-Համիդն ինքը բաւական որոշ կերպով հասկացել են ձգտումներ ի այն պատմական հակասութիւնը, հասարակական կազմութեան այն արմատական տարբերութիւնը, որոնք երկու որոշ մասի են բաժանել երկու տարրերին էլ թիւրքիայում — քրիստոնեայ և միւսիւման: Արանք հասկացել են, որ այդ բանից յետոյ իրանց տիրապետութեան ու միւսիւմանական ընդհանրութիւնը դառնում է անկարելի: Արանք լաւ հասկացել են, որ իրանց լծի տակ գտնվող քրիստոնեայ ժողովուրդների ճարտարութիւնն արդիւնազորութեան, առեւտրի, երկրագործութեան մէջ, որպէս նաև դրանց մրտաւոր ու բարոյական ոյժերն ու ընդունակութիւնները՝ մէկ ահագին վիճ են բացել այդ ժողովուրդների և թուրքերի մէջ, այս վերջինը չունենալով այդ յատկութիւնները և չը լինելով արդիւնաբերող, այլ լինելով միայն պատերազմիկ ցեղ, ընդունակ արշաւանքների համար և անընդունակ կառավարող, աշխատաւոր ու առաջադիմող տարր լինելու: Այդպիսի պարագաներում թիւրքը կարող է միայն ապրիլ իբրև օտարակեր (parasite), իբրև սպառող ու կործանող այդ քրիստոնեայ ժողովուրդներին հարստութիւնները, լինի այդ կատարված կառավարական և այլ ձևերի տակ, և օգտվելով յաղթական արշաւանքների ու երկրի տէրերի իրաւունքից ու զիրքից: Այնքան ժամանակ որքան քրիստոնեաներն ապրում էին կրաւորական ու հնազանդ կերպով, այնքան ժամանակ որքան նրանք չէին ցոյց տալիս պարզ գիտակցութիւն իրանց վիճակի մասին, այնքան ժամանակ, որքան նրանք հընդ կերպով տանում էին թիւրքական կեղեքման, կամայականութեան, կողոպտման, — այդ օտարակերութեան դործադրութիւնն ապատ էր ու գիւրին թէ օսմանեան կառավարութիւնների թէ պաշտօնէութեան և թէ թիւրք ժողովուրդի համար: Այս վերջինը լինելով աղքատ ու ոչ արդիւնաբերող՝ այդ օտարակերութիւնը դարձրել է մէկ իրական պայ-

ման իր գոյութեան: Վրա հետ միասին այդ օտարակերութիւնը դարձել է մի քաղաքական գործիք ու զէնք քրիստոնեայ ժողովուրդներին միշտ պահելու համար նիւթական սահմանափակ ոյժերի մէջ: Վիւրդերը և օսմանեան կայսրութեան այլ կիսավայրերի ցեղերը միշտ ծառայել են, միեւնոյն նպատակի համար, իբրև օգտակար զէնք օսմանեան կառավարութեան ձեռքը: Այդ վայրերի ցեղերի աւազակութեան հակումներին գոհացում տալու և այդպիսով նրանցով մի դժգոհ տարր չունենալու համար չէ միայն, որ թուրք կառավարութիւնն ամեն ժամանակ սովորութիւն է ունեցել՝ այդ ցեղերին թողնելու կատարել իրանց շարունակական յարձակումները: Այս ինքը քաջալերում էր նրանց ու հրահանգում կատարել քրիստոնեաների հարստութիւնների կողոպտման գործը, ինքն էր հրամայում ու օրէնքի վերածում, նոյն նպատակի համար, այդ ցեղերի աւազակութիւնները և դրա համար տալիս նրանց ամեն տեսակ հովանաւորութիւն ու օժանդակութիւն:

Բայց հենց որ իրանց վիճակի գիտակցութիւնը սկսաւ զարթնել քրիստոնեայ ժողովուրդների մէջ, սրանց կողմից բողոքներ տեղացին կառավարութեան գլխին: Այդ ժամանակ, փոխանակ որ և է նպատակաւարմար հետեանք տալու, բացեց դարազուլս անլուր հալածանքների, որոնք ամեն ժամանակ աւարտ էին ստանում կոտորածներով: Վրիստոնեաները սկսում էին դառնալ խիստ վտանգաւոր, եթէ բաւարարութիւն չը տրվէր նրանց արդարացի պահանջներին. և թիւրք կառավարութիւնները ջանք էին անում ջնջել, ոչնչացնել նրանցից մէկին կամ միւսին, որը ցոյց էր տալիս աւելի գիտակցութիւն և ոյժ խլրտումներ ու ապստամբական շարժումներ անելու: Այդպէս է, որ ամենահրեշաւոր ձեռնմանքն ու կոտորածները ստացան մի որոշ քաղաքականութեան իմաստ, մի գծված քաղաքականութիւն, որը յետոյ դարձաւ աւանդական, որը սովորութիւնները դործադրում էին ամեն անգամ, երբ ուզում էին բնաջինջ անել քրիստոնեայ ժողովուրդներից մէկին կամ միւսին: Այդպէս է, որ երկու հարիւր յիսուս հազարից աւելի Յոյն կոտորեցին Ատոփկա, Մօռէ, և կղզիներում: Այդպէս է, որ տեղի ունեցան բուլղարական կոտորածները, ինչպէս նաև հայ-

կական, կրէտական կոտորածները և այլն, և այլն: Այդ կոտորածները յայտնվում են իբրև կառավարական մէկ ամբողջ սխառմ ու օրէնք, որը Մեծ Մարդասպանի ձեռքին ընդունեց մի պարզորոշ գիտակցութեան բնաւորութիւն, մէկ աչքի վարնող կանոնաւորութիւն և մի զարմանալի ու ջղային կերպով գործօն քաղաքական ոյժ:

Լեւոպական տէրութիւնները միշտ թողնում էին թիւրքիային կատարել իր արիւնալի գործը, մինչև որ գալիս էր ըսովէն, որ յարմար էին գտնում միջամտութեան համար: Վաճ՝ զիտե- նալով, որ իրանք պէտք է գծովեն օսմանեան հո- ղի բաժանման խնդրի մեջ, մեծ պետութիւնները թողնում էին թիւրքիային արեան մէջ խեղդել ամեն բողոքող կամ ապստամբական գործողու- թիւն, որն առաջ էր գալիս քրիստոնէայ ժողո- վոցի զայրացած գիտակցութեան կողմից, և այդ- պիսով թիւրքի ձեռքով 1) վերջ տալ այն տար- րերի գոյութեան, որոնք իրանց գործերով կա- րող են մէկ օր հանդիսանալ բնական ժառան- գորդներ օսմանեան հողի, ժառանգութիւն, որ Լեւոպան է ցանկանում իւրացնել, ինչ դժուար եթէ ոչ անհնարին, կը լինի նրան, միանգամ այդ հողն անցած լինի փոքր ժառանգորդների ձեռքը, 2) որքան սուղ գնով էլ որ լինի՝ պահ- պանել օսմանեան կայսութիւնն այնքան ժամա- նակ, երբ պետութիւններից մէկը կամ միւսը րօ- պէն յարմար կը համարէ յափշտակելու նրանց համեղ կտորներ և՛ իր սեփական շահի համա- ձայն ու յօգուտ՝ ձեռք կը բերէ գերիշխան ազդե- ցութիւն թիւրքիայի ճակատագրի նկատմամբ: Այսպէս էր որ, Ռուսաստանը, 1877, կարծեց յարմար ըսովէն հասած այդպիսի մի նպատակի համար, որ բողոքական կոտորածները պատրուա- կելով, սկսաւ իր պատերազմը: Այսպէս էր նաև, որ, զղջալով նոյն այդ թուականի իր աճապարան- քով եղած միջամտութիւնը, — մի միջամտութիւն, որը, շնորհով Անգլիայի, չը տվեց Ռուսաստանին իր ցանկացած հետեանքը — միևնոյն այս պետու- թիւնը, իր պատերազմական գործողութիւնների հա- մար ներկայ ըսովէն բարեպատեհ չը համարելով, թոյլ է տալիս և մինչև անգամ, զազտնի համաձայ- նութեամբ, քաջալերում սուլթանին, ճնշել ու կո- տորել իր քրիստոնէայ հպատակներին՝ «պահպա- նելու համար օսմանեան կայսրութեան ամբողջու- թիւնը»: Հէնց նոյն տեսակ նպատակի համար — իրանց շահի նկատմամբ — միւս մեծ տէրութիւն- ներն էլ աջակցում են Ռուսաստանին: Մեծ պե- տութիւնները դառնում են գործակից Մեծ Մար- դասպանի, այն միակ նպատակով, որ միշտ յոյս ունեն այն բաժանելու իրար մէջ, մի բան որը ներ- կայ պարագաներում իրանց թուում է անյարմար:

Յունա-Արէտական այս ճգնաժամի հէնց սկզբում տէրութիւնների այդ ձգտումն աւելի որոշվեց տարօ- րինակ մի եղանակով: Վրա պատճառը եղաւ Արէ- տէի աշխարհագրական դիրքը, որ աւազմական ա- ռաջնակարգ մի կէտ է, որը պետութիւնները չեն ուզում զիջանել Յունաստանին, ամեն-մէկը նը- րանցից այն յոյսը գուրգուրալով, որ թիւրքիայի բաժանման միջոցին և կամ նոյն իսկ առաջ իր ձեռքը կը գցէ այն: Մասնաւորապէս Անգլիան, իր գերիշխանութեան համար Միջերկրականի վրայ, Լեզիպոսի, Մալտայի ու Կիպրոսի հետ, պէտք ունի Արէտէի, որպէս և մի քանի ուրիշ կղզիների Արևելալեզոսում: Այդտեղ է բացատրութիւնն այն խիստ հակառակութեան և դիպումատական ամեն տեսակ երկմտի խաղերի, որով Անգլիան ջանք է անում արգելք լինել քոյր կղզիի միացման մայր Յունաստանին:

Այդ բոլոր փաստերի համախմբման շնորհով է, որ ամբողջ աշխարհ այսօր վկայ է մի քսամնելի ու ոճրագործական տեսարանի. — մի կողմից՝ եւ- րօպական տէրութիւններն իրար հետ կեղծաւո- րաբար համաձայնած յանուն թիւրքիայի ամբող- ջութեան, այդպիսով թոյլ տալով սուլթանին անել իր կոտորածները և իրանք իսկ աջակցելով Մեծ Մարդասպանին ու պաշարելով Արէտէն, ըս- պառնալով նոյնը Յունաստանին անգամ. միւս կողմից յանուն Խաղաղութեան՝ զրգուելով թիւր- քիային պատերազմ անել Յունաստանի դէմ և հեռուից անամօթաբար անտարբեր ականատես մը- նալով այդ փոքրիկ քաջարի ազգի ճիգերին ու կրած հարուածներին: Այդպիսով եւրօպական քաղաքակիրթ կոչված տէրութիւնները՝ միացած Զէքի, Սաադէթին, Հաքիբ, Վաղւմ և այլ մարդասպան վայրենի փաշաների հետ և իրանց հա- մաձայնութեամբ նեցուկ յայտնվելով սուլթանին՝ չեն թողնում որ ջարդերի շրջանը վերջ ստանայ:

Մենք ապացուցեցինք արդէն, որ Երզնկ Հա- միդն ամեն շահ ունի կոտորածներ անելու և որ եւրօպական Համաձայնութեան ընթացքը կատար- եալ խրախոյս է սուլթանի արիւնահեղ ու կոտո- րածի քաղաքականութեան: Ենթերե է, որ դրա- նում մասնաւորապէս Ռուսաստանն է գլխաւոր դե- րակատարը: Վերջին երեք տարւայ միջոցին նրա ազդեցութիւնն Արեւելքում մեծապէս խտացել է, դառնալով հզօրագոյնը: Լօբանովի ստեղծած քա- ղաքականութիւնը՝ համաձայն Ռուսաստանի պատ- մական շահերին Արեւելքում, որպէս նաև թիւր- քիայի ներկայ ըսովէն անմիջական շահերին — զը- րանումն է ռուսական ազդեցութեան ոյժը և Պօլ- սում: Ռուսական դեսպանատան ժրջան գործու- նէութիւնն օսմանեան մայրաքաղաքում, խորապէս ծանաչելով սուլթանի, նրա կառավարութեան և

մինչև իսկ թիւրք ժողովրդի բնաւորութիւններն ու թոյլ կողմերը, մի դիւանազրիտական ընթացք՝ համապատասխան այդ ճանաչելուն և վերջապէս դադարների համաձայնութիւններ — այդ բոլոր միջոցներով, ճարտարապէս միաւորված միմեանց հետ, Ռուսաստանը դիմագրաւեց անդլիական պահպանողականների անվճռական ու խարխափող քաղաքականութեան, Խալիլիային՝ որ ջարդված է Հաբեշտտանի դէպքերից ի վեր, աւստրիական քաղաքականութեան, որ ռուսական շահերի ամենամեծ թրշնամին է Բալկանեան թերակղզիում և որի հետ Ռուսաստանն անում է խորամանկ հաճոյախաղեր: Գերմանիայի «Ջահիլ բռնապետը», որն իր ձեռքին է դրել թիւրքիայի ղեկորական ոյժը և գործածում է նրան իր քմահաճոյքի համաձայն, երկրտեք եղբայր ռուսական «Ջահիլ բռնապետին» մատուցանում է իր աջակցութիւնը, որպէս նաև հանրապետական Ֆրանսիան, որ ուրանալով իր ամենագեղ աւանդութիւնները, դարձել է ռուս քաղաքականութեան արձագանգն Արևմուտքում և նրա գործակալն՝ Արևելքում, ուր՝ երբեմն Մեծ Ֆրանսիան՝ հասել է այն աստիճան պստիկութեան: Ռուսաստանի մէկ այդպիսի ազդեցութեամբ ու առաջնութեամբ Արևելքում, միմիայն ռուսական շահերին է, յիշատի, որ կարող է ծառայել օսմանեան կայսրութեան ամբողջութիւնը: Եւ այնքան ժամանակ, որքան տեւէ այդ ամբողջութիւնը, որ գլորվելով՝ արշաւում է դէպի իր քայքայումը, — եթէ ոչ միակ, գէթ ամենամեծ շահողը կը լինի Ռուսաստանը: Սուլթանականութեան միջոցով Յարութեան արշաւանքն է Եւրոպայի ու քաղաքակրթութեան վրայ պատրաստվում ներկայումս: Առաջինն այս րօպէիս ուրիշ բան չէ, եթէ ոչ կատարեալ կերպով գործածվող մի գործիք երկրորդի ձեռքին: Այնքան արդէն իր սեփականութիւնն է կարծում Մեծ — և դուրսէ Փոքր — Հայաստանի հողը: Նրա յաւակնութիւնները դեռ չեն հասնում մինչև Արևիկա, որն այնպէս դայթակղական կերպով լուանում է իր ծիծաղիտ ափերը Միջերկրականի ալիքներում: Եւ մեն բան ժպտում է Ռուսաստանին նաև այն տեսակետից, որ նա յոյսեր ունի սուլթանի հետ համաձայնութեան գալ Բօսֆորից ազատ անցք ունենալու, իբրև վարձատրութիւն թիւրքիային մատուցած այն ծառայութիւնների փոխարէն, որ գլխաւորապէս Ռուսաստանին է պարտական սուլթանն օսմանեան կայսրութեան ամբողջութեան պահպանումը ներկայումս, ինչպէս նաև նեցուկ է եղած սուլթանին առաջ մղելու արեան քաղաքականութիւնը:

Ահա եւրոպական քաղաքականութեան այդպիսի պայմանների միջոցին է, որ Յոյնը պատե-

րազմում է և Արէտոցին ապստամբում: Հարկաւ, զուտ ասպետականութեամբ դրդված չէր, որ Յունաստան այնպիսի գործօն կերպով վազեց քոյր Արէտէի օգնութեան: Ազգային ու բարոյական տեսակետերից աւելի ևս մեծ քաղաքական ու տնտեսական շահերի համար է, որ Յունաստանը պէտք ունի իրան միացնելու ցեղակից Աղգին: Բացի դորնից, սակայն, Յունաստանի ներկայ դերը նաև այլ կերպի նշանաւոր է և աւելի մեծ ու խոր իմաստով: Նախ, Յունաստանն այսօր կրում է ոչ միայն իր ազգային, Հելլենականութեան վրսեմ դրօշակը, այլ այդ դրօշակը միաժամանակ արձանագրած ունի իր փառաւոր ծալքերի վրայ լուսաւորութեան գործն Արևելքում, և թիւրքիայի լծի տակ հեծող բոլոր միւս ժողովրդները պէտք է համախմբեն այդ դրօշի տակ, այն պաշտպանելով մինչև վերջին շունչ: Արկորդ. Յունաստանն իր ներկայ պատերազմով առաջ է դնում, իբրև ժամանակը հասած, օսմանեան կայսրութեան հողի ժառանգութեան վերջնական խնդիրը: Վրիստոնեայ ժողովրդներն են, այսօրեան հպատակները թիւրքիայի, ինչպէս Արէտացին, Մակեդոնացին, Հայը և սուլթանահպատակ Յոյները, և նրա երեկեան հպատակները, ինչպէս Յունաստանն ինքը, Բօլգարիան, Սերբիան, որոնք պատմական առաքելութիւնն ունեն լուծելու Արևելեան Խնդիրը, դառնալով ժառանգորդներ օսմանեան հողերի, որ արդէն պատկանում է նրանց պատմական ու ազգադրական իրաւունքով, որպէս նաև նիւթական հարստութեամբ: Եւ այդ է միակ միջոցն արգելք լինելու ռուսական բռնապետութեան հեղեղման Եւրոպայի վրայ, որպէս և այս վերջինի յաւակնութիւններին:

Եւրոպ. իր այդ կրկնակի մեծ գործով Յունաստանը գործնական կերպով նոյնպէս առաջացնում է այդ բոլոր ժողովրդների մէկ ընդհանուր անկախ դաշնակցութեան կենսական խնդիրը, իբրև անպայման կերպով անհրաժեշտ՝ մի կողմից հէնց իրանց ռեփական վօրացման, միւս կողմից ամբողջ Արևելքի — պատմական հին մեծ մարդկութեան — վերածնութեան ու զարգացման համար:

Ահա դա է Արևելեան խնդրի զօրդեան հանգոյցը կտրելու միակ միջոցը, իբրև բնական, արդարացի և եւրոպական քաղաքական հաւաստրակշռութիւնը չը խախտող լուծում, որն իրագործելու պէտք է ձգտեն վերոյիշած ժողովրդներն այնքան աւելի եռանդով ու յարատեւութեամբ, որքան աւելի վատութեամբ ու անամօթութեամբ վեց մեծ պետութիւնները, թե թեի տված Մեծ Մարդասպանի հետ, թշնամութիւններ են անում նրանց դէմ և ձգտում նրանց իսպառ բնաջինջ անելու:

Հելլենական դրոշն այսօր ամբողջ թալամ ու լուսաւորութեան ձգտող Արեւելքի դրոշն է: Հելլեն փոքրիկ ազգն ինքն, իր հրաշալի ու պատմական հերոսութիւններով անմահանալով, քաջարի դրօշակակիրն է, որ մարտնչում ու իր արիւնն է թափում եւրօպական քաղաքականութեամբ լարված մի խիստ անհաւասար պատերազմում: Մեծ Վիկտորիայի, իրանցով կազմած թնդանօթածիգ գունդ, սուլթանական ռումբերով մարդասպանութիւն են գործում Յունաստանի զաւակների վրայ և պատահում նրանց և ամբողջ Արեւելքի պատմական ու այնքան աղէտներ տեսած ու անիրաւութիւնների ենթակայ եղած փառաւոր դրօշը:

Հելլենական թագաւորը վերջերս արեւ է հետեւեալ եղբրական ու օրհասական յայտարարութիւնը. — «Խնդիրը Հելլենականութեան գոյութեան ու մահի մասին է, կորցնելով նրա դատն այժմ, Հելլենականութիւնն է որ դրանով սպանվում է: Այդ պատճառով մենք վճռել ենք թափել ամեն ձիգ, երթալ մինչև վերջ՝ յանուն Հելլենականութեան փրկութեան»: Մի և նոյն յայտարարութիւնը կարող են և պէտք է անեն Մեծ Մարդասպանին ոտքի տակ հեծող ու եւրօպական քաղաքականութեան անագորոյն հարուածների ենթակայ բոլոր ժողովուրդները:

ԹՂԹԱՎՅՈՒԹԻՒՆ ՀԱՆԷՊԻՅ

Հալէպ 15 Մարտ 97.

Մի քանի ամիսներէ ի վեր կիմանա՞մք սուլթանի հրամանաւ (իսնէի) նպաստի հաւաքման ձեռնարկութիւնը թիւրք բնակչաց մէջ: Ահա վերջապէս սոյն թրքապշեցուցիչ լուրն օր ըստ օրէ իրականացաւ քաղաքիս մէջ: Քաղաքիս ամենաբարձր դասակարգերէն մինչ ամենայետին թիւրք մեծամասնութիւնը շուտաւ առաւ սոյն մինչ երեկոյ անգագար բարեմաղդու են վասըն կենաց սուլթանի...

Այսօր միայն քաղաքիս թուրքերէ գանձուելի գումարը մօտ 50,000 ոսկւայ կը հասնի, ուրեմն ինչպէս չը սարսին անմիտ թուրքերն ալ, որոնց մեծամասնութիւնը ներկայ անյաջող պարագաների պատճառաւ իւրեանց օրապահիկը հայթայթելու միջոց ևս չունենալով, այսօր տաժանակիր աշխատութեամբ կ'զբաղին ամեն տեսակ խոշորոտներ յանձն առած: Ահա ինչպէս չապստամբի և չանարգէ այն կատաղի և անգութ բռնակալ սուլթանը, որ քարասիրտ և միայնգամայն իւր բարբարոսական և դժոխային հարստահարութեամբ անտանելի կացութեան մը կ'ենթարկէ... Թուրքերն ալ որոնց համար անկարելի կը թուէր բաղդակցել մասամբ հայուն թշուառութեանց: Իսկ ահա այսօր նրանք հայերէն թէ և տարբեր այլ ոչ նուազ ծանր թշուառութեան և չքաւորութեան մէջ կը տառապին ի շնորհս սուլթանի:

Մի քանի օրէ ի վեր տեղւոյս հարկահաւաքները տունէ տուն, և պանդոկէ պանդոկ թափառելով սուլթանի հրամանի համեմատ լրենց պաշտօնը գործադրե-

լու կաշխատեն, բայց ի զուր, այսօր յիմար թուրքն իսկ, սուլթանի ընթացքի վայրագ և կատաղի ճնշումները նկատի առնելով, անդագար անեծքներ կը տեղացնեն չար բռնակալի գլխին, և շատեր բաձարձակապէս կ'ապստամբին ընդդէմ հարկահաւաք պաշտօնէից, կրկնելով «այն քաղաքներէն միայն պէտք է հաւաքել ուր՝ սուլթանի հրահանգաւ ամեն տեսակներով հարստացան, մենք բերիացիներս սոյն հրահանգներէն զուրկուեցանք, ուրեմն ինչ արդարութեամբ ստիպեալ եմք այդ ահագին գումարը վճարել»:

Առ այս քաղաքիս թուրք բնակչաց մէջ տիրած արտոտութիւնը և միայնգամայն կրած տառապանքը օր ըստ օրէ կը սաստկանայ այնպէս որ անհամբեր կ'սպասենք սոյն խռովութեանց հետեւութեանը:

Յունվար 7 ին սուլթանի ծննդեան տարեդարձի առթիւ քաղաքիս (Սալիպէ) կոշուած թաղի պահականոցը սքանչելի տեսարանով մը կը փայլէր... Այն աստիճան որ չորս հատ մօմերու և հինգ հատ (նէվասէներու) ճրագներու աղօտ լոյսերը մերթ ընդ մերթ փրփրելով հաղիւ հաղ զիրենք շրջապատող լապտերը կը լուսաւորէին. կարծես ծաղկանց բուրաստան մը դարձած էր սոյն պահականոցի շրջակայքը. բայց, սա ուրիշ բան չէր, այլ վայրի (խառնապիթի) կաղամբի ապականուած կանաչ լայնաթերթեր էին, որոնք փողոցներու անկիւններէն հաւաքուելով մի քանի դրօշակաձեւ կտաւի հետ պահականոցին շրջակայքը կախուած էին: Այս խայտառակ տեսարանը բոլոր ժողովուրդը ծիծաղը կը շարժէր երբ պահականոցի մօտէն կերթեկէին. և շատեր իսկ իրենց զբաղումները թողլով կը փութային դիտելու այս ծիծաղաշարժ տեսարանը որի զոյցը շուտով տարածուեցաւ ընդհանուր հասարակութեան մէջ, այնպէս որ նոյն պահուն զօրաց հրամանատարը ևս իմանալով, հեծեալգօրով մը կիմացընէ վարկէնապէս վերցնել (խառնապիթի) կաղամբի թերթերն: Միւս պահականոցները սոյնի շքեղ զարդերէն... ևս զերծ մնացեր էին:

Այս պարագան կը հաստատէ թէ թուրք ժողովուրդն իսկ սկսած է մի տեսակ ծիծաղով վերաբերել դէպի սուլթանի խալիֆայական սուրբ անունը...

Վիմանալ թէ Շաքիր փաշան ընդհանուր բարեկարգիչ նշանակուած է և քաղաքէ քաղաք շրջելով ժողովուրդեան անդորրութիւնն ու խաղաղութիւնը վերահաստատելու անհրաժեշտ ջանքերն ի գործ պիտի դնէ եղբր անխորութեամբ:

Սոյն եղեռնագործը փետրվարին քաղաքս ժամանեց, նորա ժամանելէն ի վեր դէպքերն և յափշտակութիւններն օր ըստ օրէ աւելցան ի փոխարէն անդորրութեան: Այդ յափշտակութիւններն տեղեկագրելու համար երկար ժամանակի պէտքն կ'զգամք. ուստի միայն մի քանիներն աստ տեղեկագրելու հաղիւ կարող կըլլամք:

Անցեալ փետր. 25-ին ժամը 12-ի միջոցները, Այնթապցի մի տաճիկ անձի մը դիմեցունն մտնելով մի քանի գաւաթ օղի կուլ կուտայ առանց արժէքը վճարելու. յետոյ ոտքի ելնելով իբր արբեալ գինետան մէջ կըսկսի թափառիլ մէկէն միւս անկիւնն, և մերթ ընդ մերթ գինետան դրան մօտ երթալով չորս կողմը կը դիտէր. երբ գինեպանն զբաղված էր, յանկարծակի նորա վրայ յարձակելով զայն գետին կը տապալէ կրկնելով «հա՛ սա հա տիւնեատա կեաւուր մի վար» (զեռ աշխարհիս վրայ միթէ կեաւուր մնացած է) և խեղոյն մէջքէն դաշոյնը հանելով ճարահատեալ

գինեպանին վիզին կուղղէ. բարեբաղդաբար այդ րօ-
պէին նոյն տեղէն անցնող Գրիգոր անուն անձը այս
սոսկալի տեսարանը տեսնելով կը փութայ յուսահատ-
եալ գինեպանին մօտ, և կը յաջողի ոտքի հարուա-
ծով մը գազանասիրտ թուրքը գետին փռել և մա-
համերձին նոր կենդանութիւն մը պարգեւել:

Նոյն պահուն գինետան մօտ գտնուած պահակա-
նոցին լուր տրուելով, ոճուագործը կը ձերբակալուի.
բայց դժբաղդաբար ղեռ պահականոց չթափանած ա-
զատ կ'արձակուի ի քաջալերութիւն այլոց:

Փետրվար 28-ին ժամը մեկին միջոցները միականի
մը շուկայէն տուն կը վեռագրաւնայ, ճանապարհին ե-
րեք անձանց կը հանդիպի որոնք ժամը քանի ըլլալն
կը հարցունեն միականիին. սա միամտաբար հաղիւ հաղ
ժամացոյցն գրպանէն հանած էր. երբ աւազակները
երկու հարուածով կարողացան ժամացոյցն և շղթան
յափշտակելով խոյս տալ:

Նոյն պահուն փողոցի գիշերապահն միականիի օգ-
նութեան աղաղակներէն թէև ուզեց նորան օգնել, սա-
կայն ծերութեան պատճառաւ կարող չեղաւ ժամա-
նակին հասնել:

Այս տեսակ դէպքեր քաղաքիս մէջ սովորական
եղած են շնորհիւ Շաքիրի:

Յիշեալի աստ ժամանելէն երկու օր յետոյ աւա-
զակաց խումն բազմութիւն մը երեկոյեան ժամը 9-ի
մօտ Սասունցի մի հայի փուռը մտնելով նրա քրտնա-
թոր ճակտի աշխատութեամբ շահած մի փոքրիկ գու-
մարն և փուռի մէջ գտնուած թարմ հացերն յա-
փշտակելով կը հեռանան, խեղճ սասունցին թեև բո-
ղոքեց բայց անլսելի մնաց: Արիւնախում Շաքիրը քա-
ղաք ժամանելէն մինչև ցարդ այցելութիւն ընդունած
չէ քաղաքիս հիւպատոսներէն, ինչպէս նաև (Պայրամի)
առթիւ նա բոլորովին այցելութենէ զուրկ մնաց. հիւ-
պատոսաց այս խիստ ընթացքը Շաքիրի զայրոյթը թէ
և կը գուգուէ, այլ սակայն նրա կանխագրեալ չար
նպատակը իրագործելու անկարող պիտի ըլլայ:

ԿԱՅԾԱԿ.

ՆԱՄԱԿ ԲԵՅՐՈՒԹԻՑ

13 Ապրիլ 1897 Բէյրութ

Ներկայ ամսոյ 5-ին երկուշաբթի օր տեղս ժամա-
նեց նորնտիւր Կուսակալ և Պօլսոյ ոստիկանութեան նախ-
կին նախարար Նազըմ փաշան, արդէն շատոնց տա-
րածայնված էր նրա գալուստն: Այդ փառը, որ ծա-
նօթ է ամբողջ Տաճկաստանի, իւր արիւնարբու բնու-
թեամբը, մեծ սարսափ պատճառեց իւր գալուստն տեղ-
ւոյս Քրիստոնեա հասարակութեանը:

Հենց որ նա ոտք դրաւ Պէյրութի հողին վրայ
մի և նոյն օրն Զօրանոցի վարի կողմը տաճիկների ձե-
ռամբ սպանվեցան երկու Քրիստոնեա երիտասարդներ,
իւրաքանչիւրը 18-20 տարեկան հասակում, թուրք
խուժանը սաստիկ գոգուած է և իրանց մոլեռանգու-
թեան աղետալի հետքերը կը թողուն ամեն մի քայ-
լափոխին: Նոքա յանգանաբար կը ծեծեն կը կողոպ-
տեն քրիստոնեաներին, իսկ կառավարութիւնը լուռ կը
մնայ անգլխաբար. 10 տարեկան թուրք տղայէն սկս-
եալ մինչև 70 տարեկան տաճիկ աւելորն իրանց մեջ-
քում զէնք կը կրեն ամենայն աղատութեամբ. Պէյ-
րութի քրիստոնեաների վիճակն խիստ դառն է և կը
վախցուի թէ աւելի դառնանայ: Նազըմ փաշայի գա-

լու հետեւեալ օրը մի քրիստոնեայ երիտասարդ, որ
նշանաւոր է իւր քաջութեամբը, ոստիկան վինւորաց քա-
րաբող մտնելով ակնթարթի մը մէջ գետին փռեց չա-
փուշին վեցհարուածի գնդակով մը, իւր սրտի վրէժն
յագեցնելու համար կսկսի գաշոյնով դիակն ծակծկել,
և երբ կը տեսնէ թէ իւր ուղածին պէս եղաւ կը թող-
նէ դիակն և կը հեռանայ դէպի Լիբանան լեռը:

Թուրքերն այս խնդիրէն սաստիկ յուզված են քը-
րիստոնէից դէմ:

Կ. ԿԱՅԾԱԿ.

ՆԱՄԱԿ ԱՐԱՐԱՆԵՐԻՑ

(Շարունակութիւն*)

Ահնայ քստմնելի կոտորածի ատեն պզտիկ ճգնա-
ժամ չէր, զոր անցուց Արաբկիր, հէ, Ահնայ կոտորա-
ծը, որ համայնաւէր ջարդէն տառնեմէկ ամիսներ ետքը
կը պատահէր, 1896 Սեպտ. 1-ին երբ 2,000 ան-
մեղներ խողխողուեցան և քաղաքին մեծ մասը հրոյ ճա-
րակ եղաւ 10 ժամուայ միջոցին... Երբ սուլթանը մեծ
տէրութեանց գետպաններու խոստացեր և թըքասէր Բար-
թուղէմէոսն ալ համոզէր էր, թէ յետ այսու անցեալ
անհաճոյ դէպքերը չը պիտի կրկնուին կայսրական եր-
կիրներու մէջ:

Եւ այդ էր արդէն Ահնայ հիասթափ ջարդը, որ
կը զարհուրեցնէ հայութիւնը թէ՛ թալանուածը քանի
մը անգամ ևս թալանելու և սպանուածը քանի մը ան-
գամ ևս գնդակակոծելու չափ անգութ գազան չէ թուր-
քը:

Վերջին ներումով 40 հայ բանտարկեալներ ար-
ձակուեցան ու եկան Խարբերդի բանտէն, որոնք սաս-
տիկ հսկողութեան տակ են այժմ, մահալճիւ ստացող-
ները՝ 11 հատ, ինչպէս նաև հին քաղաքական յան-
ցաւորները չարձակուեցան: Այս անհարկի ներումը այն-
քան շատ զայրացուց թուրք ամբոխը՝ որ նոր ջարդի
մը պատրաստականութիւնը շատ հեռու չէր և դեռ
մինչև հիմա յուզուած կրքերը չեն հանգարտած: Ան-
ցեալները թուրք երեւելի մը, Միւթէյհիզան, կը խը-
րոխտար թէ բանտէն եկող այսինչ հայը երբ խանու-
թիս առջեւէն անցնի սափոր մը պիտի տամ որ ջուր
բերէ, ու պատճառ մը պիտի գտնեմ սափորը գլխին
զարնելով երկուքէն մէկը փշրելու շուկային մէջ: Այս
կարգի շատ մը սպանալիքներ ու արարքներ իսկ:

Անշուշտ Բարենորոգմանց ցանկին մէջ էր բանտար-
կելոց արձակումն ալ, զոր Եւրօպական տիպոմատեան
ստիպումով, կամ աւելի ճիշդ՝ թախանձով ընդունել
տուաւ վեհ. Սուլթանին... Շնորհաւորութեան արժա-
նի... Եւ գործադրուեցան ալ, ինչու չէ... Հապա, հոս
կաթոլիկ-հայ մը զրկուած է գայմագամի օգնական՝
խեղճ ապուշ մը, հաց ուտել չը դիտեր. և զոր ան-
ցեալ տարի Արաբկիրի մայր-եկեղեցւոյ դէմ եղած ան-
լուր սքապղծութիւնը հայոց վերագրելու համար ամ-
բաստանագիր մը կստորագրէր: Քանի մը փողոցային ա-
նօթի սրիկաներ կան՝ որք ոստիկան են նշանակած, ար-
ժանաւոր պաշտոնեաներ վեհափառին և... Բայց այսչափ
թող մեծ տէրութեանց նախարարապետները յայտարա-
րեն գոհութեամբ բարլամէնթներու մէջ բան մը, որ
կամ տգիտութեան է կամ վատ հեգնութիւն, եթէ
վերջինը յոյժ քստմնելի չէ գոնէ առաջինը մեծ ամօթ է...

ժողովուրդը նիւթական անտանելի անձկութեանց մէջ է, անխուսափելի հետեւանք այնքան խղճալի պատահարներու, տուն չունի և քանի մը ընտանիքներ մէկ յարկի մէջ խճողուած են, նախորդ տարւոյ վերջերը բողոք միսիօնարները կարօտեալներու մասնաւոր գումարներ բաշխեցին տանց շինութեանց համար որով 15-20 հիւղակներ շինուեցան, բայց կառավարութիւնը քթերնուն բերաւ, դեռ 11 ամիս չանցած գէպքէն ի վեր, ահա սկսաւ արքունի տուրքը հաւաքել ամեն նախիտ միջոցներով, կարելի՞ է չը տալ, և կամ յապաղել: Բայց խնդիր է. ինչ պիտի տայ աղքատը: Ամեն բան, հացին պատառը, որ այն բերանը դրաւ, պէտք է փութի իր բերանէն ու տայ, վասնզի... Պետական գանձուն ելեմացոյցը հաւասարակշռելու է: Այրած տանց և խանութներու էմլաքը (կալուած. տուրք) սպանեալ մարդոց պէտէլաթը (զինուոր. տուրք) վերաւոր և հաշմանդամ մարդոց թիճարէթը... Վերջապէս տալու է, եթէ ոչ կը հայհոյեն, կը ծեծեն, տունդ կը մտնեն և բարեսիրաց տուած ողորմութիւնը, խեղճ անկողինները կը քաշեն կը ծախեն, որու մէջ կը պատապարտուի ամբողջ ընտանիքը զաւակներով ձմրան այս սառեցուցիչ եղանակին մէջ. հաշուատ, ուտեստ, նախաթերք արդէն չը կան: Եւ ինչեք չը գործուիր անչեն հայաբնակ գիւղերու մէջ. — թող պաշտօնագրի ըրած հաշուաւորները, բռնաբարութիւնները, զոհուած պաշտօնէութիւնը ամենէ անագորոյն միջոցներու կը դիմէ տուրք հաւաքելու համար, եթէ եղկամ ոչխար մը ունի, անոնք արդէն շատոնց աճուրդի դրուած են, ինչպէս մեր շուկային մէջ դարբիններու քանի մը սալեր և այլ արհեստաւորներու անմիջական անհրաժեշտ գործիքներ, որոնցմով կը ճարէ բազմութիւն ընտանեաց օրապահակը: Անցեալ օր քուշնայ-գիւղէն հայ մը կը պատմէր իւր եղբոր տաժանելի հիւանդութիւնը, մահամերձ վիճակը, որ առաջ եկեր է անպիտան հարկահաւաքի մը բարբարոս արարքէն, շատ մը ծեծծելէ վերջ չէ յագեցեր և այս խիստ ցուրտին բաց դաշտին մէջ սառոյցին վրայ քանի մը պարող (պղնձէ աման) պաղ ջուրին տակ ապաստեցուցեր է երկու ժամ, ընդարձացեր ընկեր է խեղճը, որով ազատեր է, եթէ սակայն այդ դժնդակ ցաւերով և սովալլով ու ցրտահար ազատուած համարուիլ: — Բայց այս աղեկսկիծ գէպքէն վերջ չի յիշատակել նաև և վեհ. Սուլթանի մեծանձն ողորմածութիւնը՝ ապերախութիւն պիտի ըլլար, որ վեց ամիսներէ ի վեր անդադար կը գրուի Պոլսոյ թերթերուն մէջ և զոր վերջապէս բաժնել սկսան 15 օրէն ասդին, և տակաւին չի հասաւ 25,000 զուրուշի առատ գումարը, մարդ գլուխ հինգական զուրուշ տալով, բայց սա պայմանաւ որ ամեն թաղի մը խմբար դուռը կը սպասէ, ու երբ որբեւայրին ձեռքը մէկ-երկու հինգնոց դուրս կենէ հաւաքիչը անմիջապէս կը կորզէ զայն ի հաշիւ արքունի տուրք: Անցեալ օր բաւական ուշագրաւ պատասխան մը տուեր էր անազուրկ որբեւայրի մը որուն 10 զուրուշ (իրեն ու մէկ որբին) տալէ վերջ «նպաստամատոյց» յանձնաժողովոյ նախագահը ըստ իւր սովորութեան կը պատուիրէ «տղթել վեհ. կայսեր արեւաշատութեան» թէհն... ըսեր է, միամիտ կինը. — ինչ ընեմ, եթէ գոնէ մէծիտիս մը տայիք մը խմբարին կուտայի, որ վարը ինձ կսպասէ և որ 20 օրէ ի վեր կը չարչարէ զիս: Ինչ ամթ. բայց ո՞վ պիտի ըզգայ, միթէ այն որ հացագին մը կուտայ և անոր հետ վրայի ցնցոտին ալ կը մերկացնէ:

Վիչ չեն կողոպտեր նաև թաղային գիշերապահները, որոց վարձքն ալ հայերը տալու պարտաւոր են, թէև թուրքերուն համար է, վասնզի հարստացած հիւսնայի մէջ կը վախնան, ուստի թաղ. հսկողներ կը կարգեն, որբ բոլորովին անտանելի են: Հայ մը կարող չէ ժամը կէսէն (ը. թ.) վերջ իր դրան առջեւ ելնել անմիջապէս կը ձերբակալուի և 24 ժամայ բանտարկութեան հետ դրամական որոշեալ տուգանք մալ տալու է: Մինչդեռ գիշերը իրենք, թիւրքերը, էն սինըլքորը և էն հարուստը՝ մինչև լոյս կը պտտին ազատ համարձակ: Այս առթիւ, ինչպէս նաև ամեն պարագայի անհամար զեղծութիւններ կը գործածեն որոց բացատրութիւն չի պիտի ներէր «Հնչակի» ծաւալը, զորս մենք արդէն շատ լաւ գիտենք հայերս, իսկ եւրօպացիք... Բայց անոնք մեր խօսքին չեն հաւատար, վասնզի «Վեհ. Սուլթանը խոստացած է բարենորոգումներ ընել և կընէ, և ըրած ալ է կայսերական երկիրներու (մեմալէք մահրուսէ) մէջ»:

ՀԱՆԹ.

ՅՈՒՆԱ-ԹԻՒՐԿԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՍ

ԵՐԹՈՊԱԿԱՆ ԹԵՐԹԵՐԻՑ

Վերկայ ամսի 16-ին թիւրքիւն պատերազմ յայտարարեց Յունաստանին, որը և ընդունեց: Պատերազմական գործողութիւնները սկսան տեղի ունենալ յունա-թրքական սահմանագլխի միաժամանակ ծայրագոյն արեւմտեան կողմը, Էպիրուս, որպէս և արեւելեան կողմը, Թէսալիայում ու Մակեդոնիայում. նոյնպէս նաև Սալոնիկի ծոցում:

Ամսի 17-ին ընդհարում է տեղի ունեցել Նեզերոսի և Կուրիայի մէջ տեղի վայրում, Օլիմպիա լեռան Սպոնիկի կողմի իջնող զաւիպայրի վրայ:

Թիւրքական աղբիւրների համաձայն, Համդի փաշան, վեցերորդ զօրաբանակով, իբր աջողած է պահպանել առաջնութիւն, թէև չէ կարողացել յետ մղել Յոյներին իրանց դիրքից, որ գտնվում է թիւրքական Անալիպիսի դէմ առ դէմ: Իբր նա կորցրել է 200 մարդ, իսկ Յոյները՝ մօտ 1,000: Սրանք սակայն թիւրքական աղբիւրներից են: Ամենքում յայտնում են, որ դեռ որոշ տեղեկութիւններ չըկան և թիւրքերի աջողութիւնները կասկածելի են:

Ամենամեծ կռիւ տեղի է ունեցել 18-ին և 19-ին Օլիմպիա լեռան արեւմտեան կողմը, Մէլունա-Պաս լեռնաբերանում, որն ուղղակի յարաբերութեան մէջ է դնում թիւրքական գլխաւոր բանակավայր Էլասսոնը Յունաստանի հողի վրայ գտնված Տուրնափօ կարեւոր ամրութեան հետ, որը գտնվում է շատ մօտ յունական գլխաւոր բանակավայր Լարիսային: Ամսի 19-ի իրակնադէմին Յոյները Մէլունայի վրայ այլ ևս միայն երկու դիրք ունէին, որոնցից մէկը խախտվեցաւ և կռիւ կենտրոնացաւ միւսի, Կրիզովայի, վրայ: Ռէյտէրի գործակալութիւնը հաղորդում է, որ այդ դիրքը առնվեցաւ, թիւրքերի կողմից, որոնք այժմ գրաւած են այն բոլոր դիրքերը, որ իշխում են սահմանագլխի այդ մասի բոլոր անցքերին, Պապալիվադոյնց մինչև Մէնեքէ, որտեղ Մաստրապասի յունական գունդը փախստի դրվեցաւ:

Ընդհանուր Հրամանատար Էտհեմ փաշա բերել էր իր հետ պահեստի զօրքերը, որոնք խոնկեցան Մէլունայի անցքի ստորոտը: Այդ ընդհարումը սկսվեցաւ

ռաբաձգութեամբ երկու կողմից և աւարտ ստացաւ սուհ-նահարութեամբ: Յայտնի չէ, թէ որքան կորուստ է եղել, բայց 200-ից աւելի յունական զինուորներ վիրաւորված փոխադրված են Լարիսա: Daily Graphic-ի ասութեամբ անգլիական կառավարութիւնը ստացել է հաստատումն թիւրքական այդ յաղթութեան Մէլունայում, որը թիւրքերին միջոց կը տայ արշաւել դէպի հարաւ, Տուրնափոյի ու Լարիսայի վրայ, որ, սուլթանի կողմից վաւերացված պատերազմական յատակագծի համաձայն, որոնք կը սպասեն եւրոպական մի դիպլոմատական միջամտութիւն: Էտհէմ փաշան իբր ունի պատրաստ 60,000 մարդ այդ արշաւանքը կատարելու համար:

Մէկ ուրիշ ընդհարում տեղի է ունեցել աւելի դէպի արեւմտակողմ, դարձեալ Էլլասոնա Տուրնափոյի հետ կապող, թէև անուղղակի, ճանապարհի վրայ՝ Կրիտիքի լեռնախմբի շրջապատը գծող և անցնող Դէմէնիկոյով, ուր հաստատված թիւրքական 1-ին զորաբաժինը, և Դամասիով, իջնելով Եւրոպայի հովիտը կազմող դաշտը: Յոյները յայտարարում են, որ այդ կռուում իրանք ունեցել են առաջնութիւն. պատերազմական նախկին միջնաւոր Ամօլէնից, որը հրամանատարն էր նրանց ոյժերի, յետ մղած ու հալածած լինի Հայրի փաշայի զօրքերը մինչև Դամասի, սահմանագլխից մի ժամ ներս թիւրքական հողի վրայ, և հասած լինի մինչև Վիզլիա, Յունական այդ զօրքերը ասվում է աջողութիւններ ունեցած լինեն Ռեվէնի և Դրիվոնիցա: Daily News-ի ասութեամբ թիւրքերն այդ տեղերն ունեցել են 7,000 մեծաթիւ մարդիկ սպանված ու վիրաւորված:

Գարձեալ աւելի դէպի արեւմուտ, հաղորդում են, որ յունական մի զորաբաժին հրամանատար Մափրոմի-խայիս, անկանոն զնդերի հետ միացած, կտրած լինի թիւրքական զօրքերի շղթան Աօնիկոսի հիւսիսային կողմը և թափանցած Մակեդոնիա նոյն ուղիով, որ տանում մինչև Վիստրիտայի հովիտը և Բուռնասա ու Դիսակալա լեռների արեւմտակողմը, ուր հաստատված է Օմէր Վաշատի հրամանատարութեան ներքոյ գտնված թիւրքական մի զորաբաժին: Վիէննայի կիսապաշտօնական Fremdenblatt իրաւամբ խօսում է լիթւոյնների դժբաղդ կռիւների՝ մասին, որոնք տեղի են ունեցել Դրի-կալա գաւառակում:

Ամեն տարակուսից վեր է թւում Յոյների աջողութիւնները սահմանագլխի բոլորովին արեւմտեան ծայրի շրջանում, Էպիրոս և Արտայի ծոցում: Արախոս գետի վտայով կամուրջ գցելով, նրանց ռաբաձիգ զնդերը անցել են Պլատէրեմմա, ուր տեղի են ունեցել աջող կռիւներ: Նրանց հրամանատարն է գնդապետ Մուսոս: Կռիւր շատ խիստ է եղել Արախոս գետն անցած միջոցին: Յոյները մի քանի օր շարունակ նաւատորմիդից, Արտայի ծոցում, ռաբակոծել են Պրէվէզա թիւրքական բերդը, որ գրեթէ բոլորովին վնասված լինելով, այլ ևս գրաւած պէտք է համարել: Արտա քաղաքը վնասված չէ: Պրէվէզան դատարկված է բնակիչներից: Թիւրքերն այլ ևս գրեթէ գիմադրութիւն չեն անում: Արտայի ջրերում ընկղմվել է, Կռիւների սկզբում, մի նաւ: Լուրեր կան, որ Յոյներն անցնելով երկրի ներսը՝ աջողել են գրաւել Ֆիլիպիդէս գիւղաքաղաքն, ուր թիւրքերը խիստ դիմադրութիւն են ցոյց տվել, որպէս նաև գրաւել են մի քանի այլ գիւղեր: Լուր կայ, որ Յոյն զօրքերն այժմ ուղղվում են դէպի Էպիրի մայրաքաղաք Եանինա, իրանց հետ ունենալով նաև ան-

կանոնների զնդեր: Տեղական աղգաբնակութիւնը, Յոյն գիւղացիներ, ապստամբելով միացել են Յոյն զօրքերին: Ապստամբների թիւր երեք հազարից աւելի է:

Մելունայի մեծ կռվում սպանվել է Հաֆիզ փաշան:

Կարիայի կռիւր խիստ արիւնահեղ է եղել: Յոյններն այդ կողմերում փորձ են անում պատերազմական գործողութիւններ անել Էտհէմ փաշայի զօրքերին, որ ուղղվում են դէպ Տուրնափո ահագին ուժով, յետ բերել տան յայտնի բաժին: Յոյների կորուստը Անալիպիսի կռվում անշան է եղել:

Տուրնափոյի շրջապատում թիւրքերն աջողել են Յոյների ձեռքից խլել ամենալաւ դիրքերը: Ճակատամարտերը եղել են խիստ արիւրահեղ: Երկու կողմի կորուստները մեծ են: Թիւրքերը ռաբակոծում են Տուրնափոն, որը, ենթադրվում է, շուտով նրանց ձեռքը կընկնէ: Էտհէմ փաշան, որն ինքն է այդ կողմերը կառավարում զօրքերին, ինքը զորաբանակով ուղեւորվել է դէպի Լարիսա: Այդ կողմերի կռիւներում մասնակցել են յունական թագաժառանգ Աօնսդանդինը, որն ընդհանուր հրամանատար է հելլենական զօրքերի, և իր երրորդ եղբայր Նիկոլան: Ամեն կռիւնները երկու կողմից էլ մղվում են աննկարագրելի կատաղութեամբ: Յունական զօրքերի սքանչելի անվեհերութիւնն ու քաջագործութիւնները խոստովանում են թշնամիներն անգամ:

Մի հեռագիր Լարիսայից հաղորդում է, որ Վիզլիայի և Դամասի մօտերը եղած ճակատամարտերի միջոցին Յոյները գերել են 200 թիւրք: Լուծակիի, Բօղազի և Ռաբակիի կողմերը կռիւներ են տեղի ունեցել: Մի հեռագրի համաձայն, ամսիս 20-ին թիւրքերը յարձակում են արել (Էպիր) Բլախերնի կամուրջի վրայ, բայց Յոյները նրանց յետ են մղել յաղթական կերպով, սպանելով նրանց հրամանատար հարիւրապետին: Յոյներն այդ կողմերում ձեռք են բերել բազմաթիւ դիրքեր: Յոյն զօրքերի բարոյական կորույթը սքանչելի, որպէս և ոգեւորութիւնն աննկարագրելի: Յոյներն այժմ արշաւում են դէպ Եանինա Էպիրի մայրաքաղաքը:

Ռեվէնայի կողմերը Յոյները նոր յաղթութիւններ են տարել: Ապստում են, որ մօտերս Յոյներն իրանց ձեռքը կը գցեն Դամասին:

Չէմալ փաշան սպանված է:

Լազմաթիւ զնդեր յունական ապստամբների անցած են Մակեդոնիայի ներքերը: Յունաստան են հասել բազմաթիւ իտալական կամաւորներ:

Վերջին լուրերի համաձայն, յունական նաւատորմը ռաբակոծել է, Սալոնիկի ծոցում, Պլատանեա քաղաքը և զօրքերը ցամաք են իջել: Լուր կայ, որ նրանք ռաբակոծել են նաև, նոյն ծոցում, Կատերինա քաղաքը:

Օդէսայից հեռագրում են ֆրանսիական Journal-ին, որ Ռուսաստանն ամեն զինւորական պատրաստութիւններ է տեսած Սեւաստապոլում միջամտելու յունա-թիւրքական պատերազմին: Լուրեր կան նաև, որ Ռուսաստանը, իր արեւելեան քրիստոնեաների վրայ առերեւոյթ ունեցած հովանաւորութեան հիման վրայ պէտք է միջամտէ պատերազմին, եթէ թիւրքիան յաղթող լինի, պատրուակելով քրիստոնեաների վիճակի բարենորոգումը: Հակառակ դէպքում, եթէ թիւրքիան յաղթվէ, սուլթանի հետ ունեցած գաղտնի համաձայնութեան համեմատ՝ Արաիւ Համիտը պէտք է խնդրէ Ռուսաստանի աջակցութիւնը:

Բաղարիան, օգտվելով Թիւրքիայի ներկայ վիճակից, թէ գրաւոր և թէ իր Կ. Պոլսում գործակալի միջոցով որը մասնաւոր տեսակցութիւն է ունեցել սուլթանի հետ, պահանջներ է դնում, որ սուլթանը համաձայնէ բերականի խնդիրը կարգադրել, Մակեդոնիայի հինգ քաղաքներում բաղարիական եպիսկոպոսների հաստատումն ընդունելով, որպէս նաև երկու քաղաքում՝ բաղարիական յատուկ գործակալներին: Բաղարիան սպառնում է ամսիս 24-ին իր զորքերը շարժել դէպի Թիւրքական սահմանագլուխը, եթէ սուլթանը համաձայնութիւն չը տայ: Այս վերջինս նախ մերժել է. յետոյ լուր է տարածվել, որ իբր զինաներ, բայց միայն երեք քաղաքի համար: Այս վերջին լուրը ստուգութեան կարօտ է:

Ուսմանիան, տեսնելով Բաղարիայի բռնած վերջին դիրքը, զորքեր է ուղարկում Զոջովայի կողմերը, մտադրելով Բաղարիայի վրայ յարձակում անել:

Սերբիան յայտարարել է Թիւրքիային, որ եթէ իւր սահմանագլխի կողմերը, մասնաւորապէս Նովի-Բազար սանջակում, ուր երկիւղը մեծ է, տեղի ունենան քրիստոնեաների կոտորածներ մահաւորականների կողմից, նա իւր զորքերը կը հանէ Թիւրքական հողերի վրայ: Սերբիան, բացի այդ, Թիւրքիայից պահանջում է մի նաւահանգիստ:

Գերմանիա ամենավերջին ձևի թնդանօթներ և երկ երկու գերմանացի թնդանօթաձիգներ ուղարկած է Մարդասպանին օգնութեան:

Յունական մի զօրագունդ ռմբակոծել է Սարտի քարանտա քաղաքը, որտեղ կար Թիւրքաց միւրանոցը, որը բոցերի մէջ մնացել է քիչ յետոյ, Զօրաբանակը փակվել է միջնաբերդում: Զօրքերի մի ջոկատը ցամաք իջել, առանց նաևի թնդանօթի անհրաժեշտութեան և գնացել Սէնայի մերձակայ քաղաքը: 600 հոգու բանակը մղուեցաւ դէպի բլուրները, թրքերի կորուստը չի գիտցուիր դեռ: Յոյներից երկու զինւոր վիրաւոր:

Պրէվէզայի մօտ Սուլի և Կաւարինա գիւղերի բնակիչները, որ ապստամբութիւն էին բարձրացրել, ասվում է, թէ այնտեղի զօրանոցի Թիւրքերը պիտի պաշարեն նրանց:

Յունաց հրամանատարը հեռագրում է Էպիրից թէ Յոյն բանակը գրաւեց Կիւմիւշա, Ստերգիվնայի մօտ: Արևելեան բանակը ռմբակոծեց Լէֆթօ Կարիա: Արևմտեան բանակը այրեց Մուրտօն: Այսօր քանդեցին Ռանտա քարատան՝ պատերազմական միւրանոցը, ուր գտնվում էր Թիւրք բանակի պաշարիչների մի մեծ ամբար:

Պրէվէզան մասամբ քանդված է Յունաց պատերազմական նաւի ռմբակոծութիւնից:

Լպիրի կողմը, Սալակօրան գրաւվել է Յոյներից, բնակիչները ծախահարում էին զինւորների հետ, երբ Յունական զրօշակը վեր էր բարձրանում: Թիւրքերից գրաւված է չորս թնդանօթ, ռազմամիւրք և պաշար:

Մատիում Յոյները ոչ միայն գրաւած են նրանց գիրքերը, այլ և ցիրուցան են արել թշնամու հեծելազօրների բանակը: Գերմանացի օֆիցերներ գերմանական ունիֆորմով Թիւրքերի հետ միասին կուենին տեսնուել է:

Լարիսան և տրնավօն Թիւրքերի կողմից գրաւվեց, Յոյները ունեցան ծանր կորուստ:

Լպիրսում Յոյն բանակը կրկնապատկված է և դեռ շարունակում է առաջ գնալ:

250 Նոր Գարիբալդեան կամաւորներ մեկնել են դէպի Էպիրոս: Նրանց գլխաւորը Գեներալ Ռիսնօգաի Գարիբալտի, մնացել է Աթէնք Իտալիայից հետգհէ հասնող կամաւորները կազմակերպելու համար, որոնց սպասվում է:

600 Իտալացի կամաւորներ չը նայած ոստիկանութեան խիստ հակողութեան աջողած են նստել մի Յունական նաւ և ուղևորել դէպի Յունաստան:

Հարուստ Յոյն Ավերովի, պատերազմական ծախսերի համար, ձեռնարկած հանգանակութեան գումարը հասած է 30,000,000 ֆրանկի:

Սուսացութեանս Գանձարանում շնորհակալութեամբ ստացվել են հետեւեալ գումարները:

ՓՈՇԻ քաղաքի մասնաձիւղէց 60 ֆր.

ԳԵՐՄԱՆԻԱ. — X քաղաքից, Y-ից 92 անգլ. ոսկի և 8 շիլինգ: Բեռլինից մի խումբ ուսանողների կողմից 20 մարք: Լէյպցիգից մի խումբ ուսանողներից՝ 12 շիլինգ:

ԹԻՒՐԿԻԱ. — Կ. Պ. քաղաքից. ֆ. ի ձեռքով X-ից 75 ջրշ. Արտ. ից 20 ջրշ.

Ս. — քաղաքի շնչ. Մասնաձիւղը ստացել է 2 օսմ. ոսկի, Պ. Մուշեղ Գատեանի ձեռքով հանգանակված Թ. քաղաքում:

ՄԵՐԻԿԱ. — Y. Ա-ից 1 դոլար:

ՊՐԱՆՍՄԻԱ. — Լիոն քաղաքի Միւթիւնից 5 ֆր:

ՊԱՐՍՎԱՍՏԱՆ. — Ասրպատականի շնչ. Մասնաձիւղից ստացված Լ...ի հաշուեցուցալը, որ պարունակում է 1) 16,681 զուան, 40 կոպէկ. 2) Կասպիան «Աշխոյժ» խմբի ցուցակով 60 ուլբի 70 կոպէկ. 3) Սալմաստի ցուցակով 4044 զուան 85 կոպէկ. 4) Արտ. ք. հանգանակված — Գ. Լ. 100 զուան, Յ. է 100 զուան, Օր. Սաթենիկ 20 զուան, Ա. Լիլ. 30 զուան, Ս. Եգ. 100 զուան, Օր. Նեկտար 25 զուան, Գր. Մ — Պ. 40 զուան, Ոմն 50 զուան, Մ. Պող. 20 զուան, Ս. Տ — Յ. 50 զուան, Կ. Տ. Յակ. 50 զուան, Գ. Եշ. 10 զուան, Ա. Սահ. 20 զուան, Ալ. Աշ. 20 զուան, Մ. Յար. (Սերգօ) 30 զուան, Գաւ. Խաղ. 30 զուան, Բնկ. «ՍԷ» 40 զուան, Տ. Մ. Ա. 40 զուան, Շաւարշ Արամեան 40 զուան, Գ. Համբ. 5 զուան, Ռ. Սահ. 10 զուան, Ոմն 10 զուան, Յ. Ապրէսեան 80 զուան, Յ. Խաչիկեան 20 զուան, Մինաս 20 զուան, Ոմն 20 զուան:

ԱՌՅՍ ՏԵՍԱԻ

Ժ Ր Ա Գ Ի Ր

ՀՆՁԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ

ՅԱԽԵԼԻԱԾ՝ ԲԱՅԱՐԱԿԱՆ ՅՕՐՈՒՄՆԵՐ.

ԳԻՆԸ 1 ՓՐԱՆԿ.

«Ա Պ Տ Ա Կ»

ԵՐԳԻԶԱԲԱՆԱԿԱՆ - ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

(ՄԻԱՄՍԵԼՅ)

Առաջիկայ Մայիս ամսին «Ապտակը» մտնում է իր գոյութեան չորրորդ տարեշրջանը: Բաժանորդ գրվել ցնկացողներին խնդրում ենք առանց ուշացնելու դիմել «Ապտակի» խմբագրութեան: «Ապտակի» տարեկան բաժանորդագինն է 5 ֆրանկ:

Յօգրւածներ, թղթակցութիւններ, տեղեկութիւններ և դրամ ու մանդատ ուղարկել հետեւեալ հասցեով. — M. Beniard. — 22, Ormiston Road, Shepherd's Bush. London W. [Angleterre].

ՏՊԱՐԱՆ

«ՀՆՁԱԿ»-Ի

10ՆԴՕՆ.

